http://doi.org/10.53587/25792865-2023.10-58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԼԱՏԵՆՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Իսրայելյան Գ.Վ., Ղուկասյան Ա.Պ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Բնակարանային գողությունների քրեաբանական բնութագրի կարևոր բաղադրիչներից է դրանց լատենտայնությունը: Բնակարանային գողությունների բնական լատենտայնությունը կապված է հանցագործների մասին իրավապահ մարմիններին տուժողի, վկայի չդիմելու հետ, ինչը պայմանավորում են տարբեր գործոններ: Մասնավորապես, հեղինակների հետազոտության արդյունքները վկայում են, որ բնակարանային գողությունների բնական լատենտայնությունը պայմանավորված է բնակչության ցածր իրավագիտակցությամբ, սեփական ուժերով հանցավորին հայտնաբերելու և պատժելու ձգտմամբ, իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հանդեպ բնակչության անվստահությամբ և այլ գործոններով:

Հեղինակները պնդում են, որ բնակարանային գողությունների բնական լատենտայնության կանխարգելման ուղղությամբ անհրաժեշտ է բարձրացնել բնակչության իրավագիտակցության մակարդակը, խթանել իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հետ բնակչության համագործակցությունը, բարձրացնել իրավապահ մարմինների հեղինակությունը և նրանց հանդեպ վստահության մակարդակը և այլն:

Բանալի բառեր. *բնակարանային գողություն, բնական լատենտայնություն, կանխարգելում:*

Բնակարանային գողությունների քրեաբանական բնութագրի կարևոր բաղադրիչներից է դրանց լատենտայնությունը:

Բնակարանային գողություններին բնորոշ է ինչպես բնական, այնպես էլ արհեստական լատենտայնությունը [1, էջ 18, 2, էջ 26]: Բնական լատենտայնությունը, որը կապված է բնակարանային գողության մասին իրավապահ մարմիններին տուժողի, վկայի չդիմելու հետ, որպես կանոն, բնութագրվում է լատենտայնության բարձր մակարդակով [3]: Դա պայմանավորված է տարբեր գործոններով, որոնք Հայաստանի Հանրապետությունում գիտական մակարդակով պատշաճ հետազոտված չեն, ուստի զգացվում է համալիր քրեաբանական հետազոտության կարիք:

Բացի այդ, հարկ է նշել, որ բնակարանային գողությունների լատենտայնության աճի մասին կարող է վկայել նաև դրանց վիճակագրությունը: Այսպես, պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ 2022 թվականին գրանցվել է բնակարանային գողությունների 1151 դեպք, ինչն ամենացածր ցուցանիշն է վերջին 5 տարիների ընթացքում, ընդ որում՝ վերջին 4 տարիներին արձանագրվել է բնակարանային գողությունների

Թղթակցական հասցեն՝ Իսրայելյան Գևորգ Վովայի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, e-mail:g_i_1979@mail.ru

թվաքանակի նվազման կայուն միտում [4, 5]: Եվ դա տեղի է ունեցել այն դեպքում, երբ Հայաստանում վերջին 7 տարիներին հանցավորությունը շարունակաբար աճել է (2015 թվականի համեմատությամբ այն աճել է ավելի քան երկու անգամ): Վիճակագրական ցուցանիշների նման անհամապատասխանության հիմքում, այլ գործոնների հետ մեկտեղ, ընկած է նաև բնակարանային գողությունների լատենտայնության (թե՛ բնական, թե՛ արհեստական) ծավալների աճը: Ուստի նշված խնդիրը համակողմանի ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ է կատարել ոլորտի քրեաբանական խորքային ուսումնասիրություն:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է բնակարանային գողությունների բնական լատենտայնության կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Հետազոտության խնդիրն է բնակարանային գողությունների բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնների վերհանումը և կանխարգելիչ ներգործության միջոցների առաջարկումը:

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա բացահայտվել են բնակարանային գողությունների լատենտայնությունը պայմանավորող հետևյալ գործոնները.

1) Իրավագիտակցության ցածր մակարդակը. երբեմն տուժողի, վկայի կողմից ենթադրվում է, որ արարքը անցավոր չէ կամ հանցագործությունն էական վնաս չի պատճառել և որ դրա մասին պետք չէ հայտնենել իրավապահ մարմինների:

2) Սեփական ուժերով հանցավորին հայտնաբերելու և պատժելու ձգտումը. այլ կերպ սա անվանվում է «ձգտում ստվերային արդարադատությանը»: Խնդիրն այն է, որ բնակարանային գողությունների որոշակի մասը կատարվում է սեփականատիրոջը կամ այլ բնակչին ծանոթ անձանց կողմից կամ նրանց կողմնորոշմամբ, քանի որ հաճախ հանցավորը նախապես ծանոթ է լինում բնակարանի կառուցվածքին, արժեքավոր իրերի թաքստոցներին և այլ առանձնահատկություններին: Ուստի տուժողը ենթադրում է, թե ով կարող է հանցանքը գործած լինել և տենչում է նրան պատժել:

3) Իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հանդեպ անվստահությունը. բնական լատենտայնությունը պայմանավորվում է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի կամ պետությունը կարող է ապահովել իր անվտանգությունը, տուժողի, վկայի անվստահությունը ոստիկանության նկատմամբ, մտավախությունն առ այն, որ փոխանցված տեղեկատվությունը կմնա անհետևանք [6, էջ 159]:

4) Վարութային դժվարություններից խուսափելը, անտարբերությունը. հանդիպում են դեպքեր, երբ հանցանքի մասին իրավապահներին տեղեկատվություն չի հաղորդվում հետագա վարութային քաշքշուկից խուսափելու միտումով, նկատած հանցադեպերի հանդեպ վկայի բացարձակ անտարբերության պատճառով: Երբեմն իր դերակատարությունն ունի ազգային մտածելակերպը. անձը խուսափում է վկայի դատավարական կարգավիճակ ստանալուց, քանզի վախ ունի, որ տեղեկատվության փոխանցման դեպքում կպատվազրկվի՝ ձեռք կբերի «գործ տվողի» հեղինակություն:

Հաշվի առնելով վերը թվարկված գործոնները, անհրաժեշտ ենք համարում հետևյալ քայլերի իրագործումը:

1. Բարձրացնել բնակչության իրավագիտակցության մակարդակը:

Իրավունքի խնդիրներից է մարդու գիտակցության մեջ իրավունքների պաշտպանության

հարցով իրավասու մարմիններին դիմելու ձգտման, հանցավորին պատժելու հակահիրավական միջոցներից հրաժարվելու մոտեցման ձևավորումը: Իհարկե, իրավագիտակցությունը չի ենթադրում իրավունքի խորը իմացություն: Յուրաքանչյուր անձ պետք է ցանկանա, որպեսզի օրենքը կիրարկվի, քանի որ այն ստեղծված է բոլորի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Հակառակ վարքը հանգեցնում է հանցագործությունների բնական լատենտայնության աճի, դրանց ինքնավերարտադրության և այլ բացասական հետևանքների [7, էջեր 63-64]:

2. Խթանել իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հետ բնակչության համագործակցությունը:

Այս ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել նպատակաուղղված իրավական քարոզչություն՝ օգտագործելով մեդիայի տարբեր միջոցների հնարավորությունները: Սոցիալ-քաղաքական ակտիվության, երկրում քրեաբանական իրադրության համար բնակչության պատասխանատվության զգացումի ձևավորումը ենթադրում է նրանց համոզմունքն առ այն, որ իրավասու մարմիններին բնակարանային գողությունների և այլ հանցագործությունների մասին հայտնելն անհրաժեշտ է: Այդպիսի քարոզչության ազդեցության տակ պետք է ձևավորվի այնպիսի համոզմունք, որ իրենց և այլոց շահերին ուղղված հանցագործությունների մասին տեղեկատվություն չհայտնելն օբյեկտիվորեն նպաստում է հանցավորների մոտ կայուն հակահասարակական ուղղվածության և հանցավոր գործունեությունը շարունակելու հնարավորության համոզվածության ձևավորմանը: Դա էլ հանգեցնում է բնակարանային գողությունների և այլ հանցագործությունների ինքնավերարտադրությանը և տարածմանը: Միայն ոստիկանության և դպրոցի, նաև սոցիալական այլ ինստիտուտների արդյունավետ համագործակցությունը կարող է նպաստել հանցավորության լատենտային մասի կանխարգելմանը [8, էջ 60]:

3. Բարձրացնել իրավապահ մարմինների հեղինակությունը և նրանց հանդեպ վստահության մակարդակը:

Այս ուղղությամբ կարևոր նշանակություն ունի իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության գնահատականը: Իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության հանդեպ թերահավատության հաղթահարումը կարող է դրսևորվել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության գնահատականի որակական փոփոխությամբ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մեդիամիջոցներով ցանկացած քարոզչությունը, առանց հանցավորության դեմ պայքարի իրական ակտիվության դրսևորման, միայն կվատթարացնի մարդկանց վերաբերմունքն իրավապահ մարմինների նկատմամբ: Ուստի պետք է համադրվեն իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման և այդ մասին բնակչության իրազեկման աշխատանքները: Բնակչի հոգեբանությունը ոչ միայն կախված է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունից, այլև դրա մասին տեղեկացումից: Որքան բարձր է իրավապահ մարմինների նկատմամբ բնակչության վստահությունը, այնքան թուլանում է լատենտայնությունը պայմանավորող գործոնների ազդեցությունը: Ոստիկանությունը պետք է արձագանքի կատարված հանցագործությունների մասին տեղեկատվությանն այնքան ակտիվ և արագ, որքան թույլ են տալիս հանգամանքները՝ չմոռանալով բարեհամբուրության և ուշադրության մասին: Դրա արդյունքում ոստիկանության և բնակչության միջև անջրպետն էականորեն կկրճատվի [8, էջ 60]:

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքներից բխում են հետևյալ եզրահանգումները.

1. Բնակարանային գողությունների լատենտայնության աճի մասին վկայում է պաշտոնական վիճակագրությունն առ այն, որ վերջին 4 տարիներին արձանագրվել է նշված հանցատեսակների թվաքանակի նվազման կայուն միտում: Եվ դա տեղի է ունեցել այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում վերջին 7 տարիներին հանցավորությունը շարունակաբար աճել է: Վիճակագրական ցուցանիշների նման անհամապատասխանության հիմքում, այլ գործոնների հետ մեկտեղ, ընկած է նաև բնակարանային գողությունների լատենտայնության ծավալների աճը: Ուստի նշված խնդիրն համակողմանի ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ է կատարել ոլորտի քրեաբանական խորքային ուսումնասիրություն:

2. Բնակարանային գողությունների բնական լատենտայնությունը պայմանավորված է բնակչության իրավագիտակցության թերություններով, սեփական ուժերով հանցավորին հայտնաբերելու և պատժելու ձգտմամբ, իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հանդեպ բնակչության անվստահությամբ և այլ գործոններով:

3. Բնակարանային գողությունների բնական լատենտայնության կանխարգելման ուղղությամբ անհրաժեշտ է բարձրացնել բնակչության իրավագիտակցության մակարդակը, խթանել իրավապահ մարմինների, հատկապես՝ ոստիկանության հետ բնակչության համագործակցությունը, բարձրացնել իրավապահ մարմինների հեղինակությունը և նրանց հանդեպ վստահության մակարդակը և այլն:

Գրականության ցանկ

1. Грудинин Н.С. Криминологическая характеристика имущественной преступности в Российской Федерации // Juvenis scientia 2018, № 3. с. 18-21.
2. Каширский С.В. Криминологическая характеристика квартирных краж и их предупреждение (по материалам Республики Мордовия, Пензенской и Саратовской областей). Автореф…к.ю.н. Саратов, 2008. - 33 с.
3. Зайналов М.Ш. Криминологические проблемы борьбы с квартирными кражами: По материалам Республики Дагестан. Автореф…к.ю.н. Махачкала, 2004 //
4. https://www.dissercat.com/content/kriminologicheskie-problemy-borby-s-kvartirnymi-krazhami-po-materialam-respubliki-dagestan.
5. Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության մասին 2022թ. հաղորդում //https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf. https://armstat.am/file/article/sv_12_22a_530.pdf.
6. Гукасян А.П. Проблемы рецидивной и профессиональной преступности (уголовно-правовые, криминологические и уголовно-исполнительные аспекты): Учебно-методический комплекс. - Ер.: Изд-во РАУ, 2014. - 272 с.
7. Իսրայելյան Գ.Վ, Հարությունյան Ա.Ս., Լատենտային հանցավորության կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան. - Եր.: Հեղ. հրատ., 2021. - 88 էջ:

8. Իսրայելյան Գ., Մկրտիչյան Ա., Մեդիայի դերը Հայաստանի Հանրապետությունում բնական լատենտային հանցավորության կանխարգելման կազմակերպման գործում //Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 3 (1), 2020, էջ 58-62:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЕСТЕСТВЕННОЙ ЛАТЕНТНОСТИ КВАРТИРНЫХ КРАЖ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Исраелян Г.В., Гукасян А.П.

Одной из важных составляющих криминологической характеристики квартирных краж является их латентность. Естественная латентность квартирных краж связана с тем, что потерпевший, свидетель не обращается в правоохранительные органы по поводу совершения преступления. Указанное обусловливается различными факторами. В частности, результаты исследования авторов показывают, что естественная латентность квартирных краж обусловлена недостатками правосознания населения, стремлением потерпевшего найти и наказать преступника собственными силами, недоверием населения к правоохранительным органам, особенно полиции и другими факторами.

Авторы утверждают, что для предупреждения естественной латентности квартирных краж необходимо повысить уровень правосознания населения, способствовать сотрудничеству населения с правоохранительными органами, в особенности с полицией, поднять авторитет правоохранительных органов и уровень доверия к ним и т.д.

Ключевые слова: *квартирная кража, естественная латентность, предупреждение.*

SOME ISSUES OF PREVENTION OF NATURAL LATENCY OF APARTMENT THEFTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Israyelyan G., Ghukasyan A.

One of the most important components of the criminological characteristics of apartment thefts is their latency. The natural latency of apartment thefts is due to the fact that the victim, the witness, does not apply to law enforcement agencies about the commission of a crime. This is due to various factors. In particular, the results of the authors' research show that the natural latency of apartment thefts is caused by insufficient legal awareness of the population, the desire of the victim to find and punish the criminal on their own, the distrust of the population towards law enforcement agencies, especially the police, and other factors.

The authors argue that in order to prevent the natural latency of apartment thefts, it is necessary to increase the level of legal awareness of the population, promote cooperation of the population with law enforcement agencies, especially with the police, increase the authority of law enforcement agencies and the level of trust in them, etc.

Keywords: *apartment theft, natural latency, prevention.*

Ներկայացվել է խմբագրության 12.07.2023
Ընդունվել է տպագրության 01.12.2023